



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 1497-Ա/Զ

« 03 » 11 2018 թ.

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՀՄ. 647 - Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի  
Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական  
ծրագրերը հաստատելու մասին» թիվ 647-Ա/Ք հրամանի՝

1) հավելված 1-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական  
կրթության (բակալավր ու անընդհատ և ինտեգրացված) մասնագիտությունների կրթական  
ծրագրերի» ցանկում՝

ա. <<0231-Բանասիրություն>> բաժնի <<023102.00.6-Օտար լեզու և գրականություն>>  
մասնագիտության 3-րդ սյունակի <<023102.09.6-Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և  
հաղորդակցություն>>, <<023102.10.6-Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և  
հաղորդակցություն>>, <<023102.11.6-Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն>>  
և <<023102.12.6-Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն>> տողերն ուժը կորցրած  
ճանաչել.

բ. <<0232-Լեզվաբանություն>> բաժնի <<023201.00.6-Լեզվաբանություն>> մասնագիտության 3-  
րդ սյունակը լրացնել նոր՝ <<023201.10.6-Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և  
հաղորդակցություն>>, <<023201.11.6-Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն>>,  
<<023201.12.6-Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն>> և <<023201.13.6-  
Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն>> տողերով:

2) Հավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի» ցանկում «0311 Տնտեսագիտություն» բաժնի «031101.00.7-Տնտեսագիտություն» մասնագիտության 3-րդ սյունակի «041301.19.7» թվերը փոխարինել «031101.19.7» թվերով:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
(պաշտոնակատար)

03.11.2018

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378